

ՀԱՐՁԱՎՈՒՄ ՀՈԱԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՎՐԱ

Երեկ, երեկոյան, ժամը 18:30-ի սահմաններում, ՀՈԱԿ Հանրապետական վարչությունը շտապ հաղորդագրություն տարածեց, որ ժամը 17.20-ի սահմաններում, երկու անհայտ անձիք հարձակվել են ՀՈԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանի վրա: Եղելությունը պարզելու նպատակով զանգահարեցինք ՀՈԱԿ Հանրապետական վարչություն եւ տեղեկացանք, որ այդ պահին կուսակցության կենտրոնական գրասենյակում են ոստիկանական ծառայության Երեւանի Սպանդարյանի վարչության աշխատակիցները: Նրանք անմիջականորեն Հ. Առաքելյանի հետ թարմ հետքերով փորձում էին բացահայտել տեղի ունեցածի մանրամասները:

Իսկ ՀՈԱԿ Հանրապետական վարչության ատենադպիր Կարեն Կակոյանը մեզ տեղեկացրեց, որ Հ. Առաքելյանը ողջ օրը տանն է եղել. «Տանից դուրս է եկել 17.15-ի սահմաններում՝ գնումներ կատարելու նպատակով: Երբ դուրս է եկել խանութից, նրա վրա են հարձակվել երկու անհայտ անձիք: Հարություն Առաքելյանը հասցրել է նկատել, որ նրանք սեւազգեստ են եւ սեւ գլխարկներով»:

Հարձակվողների դեմքերը ՀՈԱԿ ատենապետը չի հասցրել տեսնել, քանի որ «նրանք Հ. Առաքելյանի բաճկոնը քաշել են գլխին, տապալել են գետնին եւ սկսել են հարվածել ոտքերով: Ծեծկռտուքը տեսել է մի քանի բուստ, մինչեւ հարձակվողների գործողությունները կասեցնելու համար միջամտել են խանութի աշխատակիցներն ու գնորդները: Ապա հարձակվողները փախուստի են դիմել սեւ գույնի BMW մակնիշի մեքենայով»:

Միջադեպի շուրջ կասկածների եւ պատճառների մասին Կարեն Կակոյանը ձեռնպահ մնաց որեւէ վարկած հայտնելուց:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Հարություն Առաքելյանն ասուլիսի ժամանակ որոշակի որակումներ էր արտահայտել Արա Աբրահամյանի եւ նրա ղեկավարած Համաշխարհային հայկական կոնգրեսի հասցեին: Դրան հաջորդել էր Կոնգրեսի սպորտի դեպարտամենտի ղեկավար, միջազգային կարգի սպորտի վարպետ, թայ-բոքս աշխարհի բազմակի չեմպիոն Աշոտ Բալյանի հետ հարցազրույցի հրապարակումը, ուր մասնավորապես մարտարվեստի վարպետը հայտարարել էր. «...Մեր մեջ զայրութ է առաջացնում,... հարկ եղած դեպքում կպաշտպանենք Կոնգրեսի արժանապատվությունը:... Արա Աբրահամյանն ինձ չի լիազորել պաշտպանել իրեն, նա դրա կարիքը չունի»:

Երեւի սա էր պատճառը, որ երեկ լուրեր էին շրջում, թե հարձակումը պարզապես վրեժի դրսեւորում է:

Ուստիեւ որոշեցինք պարզաբանումներ ստանալ Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանից:

Վ. Աղայանը նախ նշեց, որ մեզանից է առաջին անգամ լսում միջադեպի մասին, ապա ավելացրեց. «Համաշխարհային հայկական կոնգրեսի հովանավորությունն ունեցող մարզիկների

մասնակցությունը նման բաների ուղղակի բացառվում է: Ոչ մի բան չգիտեմ՝ ինչ է եղել: Ի՞նչ կարծիք հայտնեմ: Շշմարտությունը անվերապահորեն անհրաժեշտ է պարզել եւ անհապաղ պետք է դիմել իրավապահ մարմիններին: Ես արդեն ինքս եմ շատ շահագրգռված, որ ամեն ինչ եւ շատ արագ պարզվի»:

Հարձակումից մոտ երկու ժամ անց հաջողվեց գրուցել նաեւ Հարություն Առաքելյանի հետ: Մեր հարցին, թե ի՞նչը կարող էր իր նկատմամբ նման արարքի պատճառ դառնալ եւ ո՞ւմ է կասկածում, ՀՌԱԿ ատենապետը պատասխանեց. «Մեծ բիզնեսի մեջ չեմ, երբեք որեւէ մեկի երեխայի հացին վայիս չեմ եղել: Ոչ մեկի նկատմամբ թշնամանք չունեմ: Տեսել եմ հարձակվողների դեմքերը եւ տեսնելիս կարող եմ ճանաչել: Ինքս էլ բոքս պարապել եմ եւ մի քանի թուփ կարողացա դիմադրել, մինչեւ երկրորդ հարձակվողին հաջողվեց պիջակը գլխիս քաշելով՝ փակել աչքերս:

.. Ինձ մնում էր միան հայիոյել: Շնորհակալ եմ օգնության հասած մեր քաղաքացիներին: Շատ անմակարդակ կազմակերպված հարձակում էր, բայց սա ես ընկալում եմ որպես նախազգուշացում եւ ընդունում եմ մարտահրավերը:

Ոստիկանությունը շատ արագ ու օպերատիվ արձագանքեց: Քաղմասի պետի տեղակալի ղեկավարությամբ բոլոր անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկվեցին: Թեւեւ ոչ մի ակնկալիք չունեմ, բայց շատ շնորհակալ եմ ժամանակին արձագանքելու համար: Այս պահին որեւէ մեկին չեմ կասկածում, բայց փորձում եմ գուշակել: Կասկածելը՝ կասկածել, բայց Աստված չանի սխալվեմ»:

4. ԱՅԱՐՈՆՅԱՆ